ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թ. նոյեմբերի 1 **N 189-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱԼԱԹ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքային սեփականություն հանդիսացող 21.28 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը առանց վարձակալության պայմանագրեր կնքելու օգտագործվում է համայնքի բնակիչների կողմից:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և 56^{1} - րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Ծաղկաշեն համայնքի ղեկավար Խալաթ Ոսկանյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:
2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Ծաղկաշեն համայնքի ղեկավար Խալաթ Ոսկանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ծաղկաշեն համայնքի ղեկավար Խալաթ Ոսկանյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ